ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 955-Ա/2 **28 հուլիս 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 908-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների 2020 թվականի ընդունելության տեղերը հաստատելու մասին» N 908-Ա/2 հրամանի.

1) Հավելված 8-ի «Ապահովագրական գործ» տողում «20» թվերը փոխարինել «0» թվերով:

2) Հավելված 9-ի «*Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» տողում «0» թիվը փոխարինել «5» թվով, իսկ «20» թիվը՝ «25» թվով:

3) Հավելված 40-ի «Ջերմատնային տնտեսություն» բառերց առաջ լրացնել «*» նշանը:

4) Հավելված 42-ի «*Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» տողում «7» թիվը փոխարինել «2» թվով, իսկ «25» թիվը՝ «20» թվով:

5) Հավելված 53-ի «*Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)» բաժնի.

ա. «Դաշնամուր» տողի «3» թիվը փոխարինել «1» թվով, իսկ «13» թիվը՝ «11» թվով,

բ. «Լարային գործիքներ» տողի «3» թիվը փոխարինել «1» թվով, իսկ «13» թիվը՝ «11» թվով,

գ. «Փողային և հարվածային գործիքներ» տողի «5» թիվը փոխարինել «3» թվով, իսկ «19» թիվը՝ «17» թվով,

դ. «Ժողովրդական գործիքներ» տողի «15» թիվը փոխարինել «21» թվով, իսկ «32» թիվը՝ «38» թվով:

6) Հավելված 66-ի «*Մանկաբարձական գործ» տողում «22» թիվը փոխարինել «7» թվով, իսկ «25» թիվը՝ «10» թվով:

Նախարար Արայիկ Հարությունյան

X